

Թիւ 11191  
Ապրիլ 24, 1964

Արժանաշնորհ  
Տ. Ղեւոնդ ԶՀՆԵՅ. Փափագեան  
Հոգեւոր Հովիւ Մոնթրէալի Հայոց  
եւ Նախագահ Պատուարժան Միական Խորհուրդի  
Մոնթրէալ.

Սիրելի Տէր Ղեւոնդ,

Ստացած ենք Ձեր համայնքի Տարեկան Միական Ժողովի դիւանի  
1964 Ապրիլ 19 թուակիր նամակը, որով կը հաղորդեն թէ Հոգեշնորհ  
Տ. Վաղգէն Վրդ. Թաղոյեանի նախագահութեամբ՝ Մարտ 9ին գումարուած  
Տարեկան Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի նոր կազմի  
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը  
խնդրեն ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատար-  
ուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ  
անդամ Միական Խորհուրդի.

Տիարք՝ Տօքթ. Արթուր Տէմիրճեան  
Մէթր Հայկազուն Սիւմպիւլեան  
Տօքթ. Անդրանիկ Հաղարեան  
Արամ Կուտսուզեան  
Վահէ Ալթունեան  
Անդրանիկ Թավուքճեան  
Խորէն Տողրամաճեան

Կը յանձնարարենք որ յետ այսօրիկ Ձեր եւ Միական Խորհուրդի  
տարեկան տեղեկագիրները, ինչպէս նաեւ եկեղեցւոյդ ելեւմիտից հաշիւ-  
ները Տեղեկագիր-Հարցարանին հետ Առաջնորդարան ղրկէք:

Այսու օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք  
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէու-  
թեան տարի մը, ի պայծառութիւն եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն  
համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրուանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի